Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

03.11.2021թ. **ք. Երևան**

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն, Նորք - Մարաշ և Էրեբունի – Նուբարաշեն վարչական շրջանների բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության մայոր Էդգար Ղազարյանս ուսումնասիրելով 01.11.2021թ. վերսկված թիվ 06852554, թիվ 06852845 և թիվ 06852815 կատարողական վարույթների նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 12.11.2020թ. տրված թիվ ԵԴ/0815/02/19 կատարողական թերթի համաձայն պետք է՝ պատասխանողներ ԱՁ Սերգեյ Սուրենի Սուքասյանից, Սուրեն Համբարձումի Սուքասյանից և Արթուր Արաիկի Օրդյանից համապարտության կարգով հօգուտ <<ՎՏԲ – Հայաստան Բանկ>> ՓԲԸ-ի օգտին բռնագանձել 1.406.506 ՀՀ դրամ և վճռով հաշվեգրվող տոկոսագումարներ:

Բռնագանձումը տարածել գրավի առարկա հանդիսացող ք.Երևան, Կենտրոն, Պրագայի փողոց 61 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա:

<<Դատական ակտերի հարկադիր կատարման մասին>> ՀՀ օրենքով սահմանված և ձեռնարկված հարկադիր կատարման միջոցների արդյունքում պարտապան Սուրեն Համբարձումի Սուքասյանին սեփականության իրավունքով պատկանող և գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքի գնահատման արդյունքում շուկայական արժեքը կազմել է 57.500.000 ՀՀ դրամ:

Կատարողական գործողությունների ընթացքում 03.11.2021թ. Ծառայություն է մուտքագրվել պահանջատեր <<ՎՏԲ – Հայաստան Բանկ>> ՓԲԸ-ի լիազորված անձ Արտաշես Փարսադանյանի 28.10.2021թ. գրությունը, համաձայն որի հայտնել է, որ թիվ ԵԴ/0815/02/19 կատարողական թերթի /թիվ Ե47Ի260/ վարկային պայմանագրով պարտապանների պարտավորության չափը Բանկի հանդեպ 28.10.2021թ. դրությամբ կազմում է 2.625.059,50 ՀՀ դրամ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ, 28.1-րդ, 43-րդ հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1-րդ, 35.2-րդ, 35.3-րդ և 35.4-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Պարտապան Սուրեն Համբարձումի Սուքասյանին սեփականության իրավունքով պատկանող և գրավի առարկա հանդիսացող ներքոհիշյալ շարժական գույքը՝

հ/	Լոտի անվանումը և նկարագիրը	Գնահատման գինը	Մեկնարկային գինը	Գույքի քանակը
	ք. Երևան, Կենտրոն, Պրագայի 61, սեփականության վկայականի 04122013 - 01 - 0191, կադաստրային Ծածկագրի համարը՝ 01 - 006 - 0613 0007 - 001: Ընդհանուր մակերեսը՝ 184.1 քմ, որից 85.6 քմ օրինական կառուցված, իսկ 98.5 քմ ինքնակամ կառուցված շինություններ:	**57.500.000 ՀՀ դրամ**	**43.125.000 ՀՀ դրամ**	**1**

ներկայացվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ http://.harkadir.ajurd.am կամ www.ajurd.am ինտերնետային կայքի միջոցով:

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը նշանակել «23» 12. 2021թ.:

Որոշման պատճենը ուղարկել կողմերին:

Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 5–րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Ավագ հարկադիր կատարող,
արդարադատության մայոր Է.Ղազարյան

Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն: Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում:

Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում:

Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող՝ օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անբավարարության դեպքում՝ հաջորդ հերթում ներառված այլ գույք:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4–րդ, 5–րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդից հետո, լոտը չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունելու այդ աճուրդի մեկնարկային գնով:

Պահանջատերը պահանջի դիմաց լոտն իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը:

Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց հետո, իսկ գույքի /լոտի/ հանձման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում՝ նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո: